| | | | Ջորավանք | 31 | 127 | 307 |
| | | | Անտառամեջ | 22 | 90 | 218 |
| | | | Գավառ | 61 | 251 | 603 |
| | | | Թթուջուր | 81 | 333 | 801 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 209 | 504 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 70 | 168 |
| | | | Արտաշատ | 16 | 66 | 158 |
| | | | Գետազատ | 39 | 160 | 386 |
| | | | Մրգանուշ | 16 | 66 | 158 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 53 | 129 |
| | | | Սևաբերդ | 41 | 168 | 405 |
| | | | Ջրառբյուր | 18 | 74 | 178 |
| | | | Աբովյան | 38 | 156 | 376 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 197 | 475 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 62 | 148 |
| | | | Իջևան | 18 | 74 | 178 |
| | | Երևան | | 3201 | 13150 | 31,653 |
| | Ընդամենը | | | 4335 | 17808 | 42,868 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն*                    *Բ. Զամբազյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-980-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24944-15 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24303-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա և օգոստոսի 28-ի N Մ-911-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍՕՍ սիսթեմս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02605138) 2015 թվականի օգոստոսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հակահրդեհային ահազանգման և հրդեհաշիջման համակարգերի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-981-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25038-15 և սեպտեմբերի 7-ի N 06/3-3/24719-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-1041-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի մարտի 13-ի N Մ-222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պիկ լիցենզիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2015 թվականի օգոստոսի 26-ին կնքված՝ N 2015/NKR/08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռուստացույցի և պրոյեկտորի համար մետաղական կախիչների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 180 000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-982-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25223-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24949-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա և հուլիսի 24-ի N Մ-758-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԷԴՎԱՌ ինթերնեյշնլ Ա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02584657) 2015 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N 2015/08-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ներկերի ներմուծման միջնորդական ծառայությունների մատուցում՝ 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-983-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-Ի N Մ-719-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24941-15 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24299-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի օգոստոսի 9-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-719-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի սեպտեմբերի 12-ի N Մ-846-Ա և 2015 թվականի օգոստոսի 28-ի N Մ-900-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շեն հոլդինգ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02201344) 2015 թվականի օգոստոսի 27-ին կնքված՝ N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1,000 քառ. մետր մայթի սալիկների ձեռքբերում՝ 3,999,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-984-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24937-15 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24298-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի ընդ Էլ ինքորփորեյշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01839901) 2015 թվականի օգոստոսի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 200 քառ. մետր տրավերտինե սալիկների ձեռքբերում՝ 2,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-985-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25245-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24948-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմբերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳ - էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2015 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլաստե դռների և պատուհանների ու մետաղյա ցանկապատի ձեռքբերում՝ 14,009,760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 986 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՄԱՅՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25117-15 և սեպտեմբերի 7-ի N 06/3-3/24718-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 02/14/11051-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N ՖԲ/ԱեՄ-1-2/7874-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Մայրի» հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Եղբայրության 1, ՀՎՀՀ՝ 02594556) կողմից իրականացվող՝ 3,467,000 դրամ արժողությամբ «Հաշմանդամություն ունեցող մարդկանց միջազգային համաժողովի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. «Մայրի» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Սոցիալական ինտեգրման կենտրոն "Մայրի" հասարակական կազմակերպության
տնօրեն Զարուհի Մանուկյանի կողմից
«31» օգոստոսի 2015թ.

## Հաշմանդամություն ունեցող մարդկանց Միջազգայի Համաժողովի կազմակերպում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ հաշմանդամություն ունեցող մարդկան Միջազգային Համաժողովի կազմակերպումը<br>Ծրագիրը ուղղված է՝ հատուկ կարիքներով երիտասարդների ինտեգրմանը հասարակության մեջ:<br>Նախատեսում ենք եռօրյա հանդիպումներ Հայաստանում բնակվող հաշմանդամություն ունեցող մարդկանց և արտերկրներից , նույն թվում Ռուսաստանից, Վրաստանից, Ֆրանսիայից, Հոլանդիայից ժամանած հյուրերի միջև,:<br>Առաջին օրը տեղի կունենա մշակութային համերգային ծրագիր, կանցկացվեն աշխատանքային խմբեր ՝ հայկական պարի, հոգևոր և աշխարհիկ հայկական երաժշտության, թատրոնի, հայկական խոհանոցի, ձեռքի աշխատանքի, որոնց արդյունքը կներկայացվի վերջին օրը:<br>Բացի այդ, երկրորդ օրը կանցկացվի կլոր սեղան ոլորտի խնդիրների բացահայտման, լուսաբանման նպատակով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Միջոցառման բոլոր կազմակերպչական ծառայությունները, ներառյալ արվեստի մասնագիտական աշխատանքային խմբերի անցկացումը, թարգմանչական աշխատանքը և այլ կազմակերպիչների կողմից կտրամադրվեն կամավոր հիմունքներով:<br>Ինչ վերաբերում է դահլիճի վարձակալության և սննդի կազմակերպման հարցերին, ապա ի նկատի ունենալով մասնակիցների, հատկապես հայաստանյան մասնակիցների մեծամասնության ֆինանսական խնդիրները |

| | | |
|---|---|---|
| | | Ակնկալում ենք ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից (այսուհետ՝ հարկային արտոնություններ) |
| 3. | Բարեգործը | 1. Ամերիկյան Պերկինս Դպրոցը<br>2. Ֆրանս - Հայկական Զարգացման Հիմնադրամը<br>3. "Հոֆբերգլի" հիմնադրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | 1. Սահմանափակ հնարավորություններով երեխաների և պատանիների սոցիալական ինտեգրման կենտրոն «Մայրի» ՀԿ<br>ՀՎՀՀ 02594556, Եղբայրության 1, Շենգավիթ վարչական շրջան, Երևան:<br>2. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ, Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ, Բաղրամայն 58.ՀՎՀՀ 03801255<br>3. Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն ՀԿ. ք. Երևան, 0082, Ծիծեռնակաբերդի 16. ՀՎՀՀ 02214044<br>4. Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության ՈՒՆԻՍՈՆ ՀԿ, ք. Երևան 033, Հակոբյան10, բ.56. ՀՎՀՀ00072812 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, հոկտեմբերի 1-3,<br>Բնագավառը՝ սոցիալական, մշակութային |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,467,000 դրամ (երեք միլիոն չորս հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տասնվեց տարեկանից մեծ հաշմանդամություն ունեցող անձինք |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 3 օր (2015թ. հոկտեմբերի 1-ից – 3-ը ) |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դահլիճի վարձակալության 467,000 (չորս հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ<br>2. Սննդի ապահովման ծախսեր 3,000,000 (երեք միմիոն) ՀՀ դրամ |
| 10. | Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1.Դահլիճի վարձակալության ծախսերը երեք օրվա համար, նախատեսվող գինը՝ 467,000 (չորս հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամ<br>2. Սննդի ապահովման ծախսերը չի կարող հաշվարկվել ճշգրիտ , քանի որ դեռևս հայտնի չէ [illegible] քանակը: Ակնկալվում է մոտ 100 հյուրերի ընդունելություն: [illegible] մեկ անձի համար օրական 10 000 դրամ հաշվարկից՝ [illegible] երեք օրվա ընթացքում: |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Մայրի» ՀԿ հոգաբարձուների խորհուրդ, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 987 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԶՈՀՎԱԾ ԵՎ ՎԻՐԱՎՈՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՂ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24753-15 և սեպտեմբերի 5-ի N 06/3-3/24529-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Պատիվ Ռազմահայրենասիրական» կազմակերպության կողմից «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (օգտագործված հագուստ՝ 740 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 100 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և զոհված ու վիրավոր ազատամարտիկների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքներին բաշխման ծրագիրը:

2. «Արարատ քաղաքի զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին աջակցող» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանարապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 988 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N Մ-748-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի N 689 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 1-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Էօրնեկեան վարժարանի շինարարական աշխատանքների համար ամրանների մատակարարում» ծրագրի մասին» N Մ-748-Ա որոշմամբ (2015 թվականի հունվարի 30-ի N Մ-058-Ա, մարտի 13-ի Մ-256-Ա, մարտի 25-ի N Մ-277-Ա և մայիսի 15-ի N Մ-508-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի հոկտեմբերի 20-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 989 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՉԱՐՁԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25211-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24835-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 02/14/11053-15 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի N 01/21.1/4342-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 156,949,445 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2015 թվականի հուլիսի 27-ին կնքված՝ N ՀՀՏՀ-10/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ջրտուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2015 թվականի հուլիսի 27-ին կնքված՝ N ՀՀ-08/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՆԱԻՐԻՇԻՆ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300835) 2015 թվականի հուլիսի 27-ին կնքված՝ N ՀՀ/Ջ-1/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 154,749,445 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«04» սեպտեմբերի 2015թ.

# «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել ՀՀ Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բնակիչներին խմելու ջրով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործ | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղ, ջրամատակարարման բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 156.949.445,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Խաչարձան գյուղի համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ հուլիսի 27 -ից մինչեւ 2016թ դեկտեմբերի 27-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ հուլիսի 27-ից մինչեւ 2016թ. դեկտեմբերի 27-ը վերակառուցման աշխատանքների կատարում՝ 154.749.445,00 դրամ արժողությամբ, |

2

| | | |
|---|---|---|
| | | նույն ժամանակահատվածում տեխնիկական հսկողության իրականացում՝1.300.000,00 դրամ արժողությամբ,<br><br>հեղինակային հսկողություն՝ 900.000,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՆԱԻՐԻՇԻՆ» ԲԲԸ-ի կողմից ջրամատակարարման համակարգի վերակառուցում՝ 154.749.445,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br>«Հայաստանի Հանրապետության նախագծերի Պետական Արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 1.300.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Ջրտուր» ՍՊԸ-ի կողմից ջրամատակարարման համակարգի վերակառուցման ընթացքի հեղինակային հսկողության իրականացում՝ 900.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի; |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու [illegible] կառավարության բարեգործական [illegible] համակարգման հանձնաժողովի կողմից [illegible] և ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 990 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԵՂԻԿ ՄՈՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25205-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24859-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 02/14/ 11054-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 37,458,580 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եղիկ Մողյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցի համար ուսուցողական սարքավորումների ձեռքբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արեգ» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05007719) 2015 թվականի օգոստոսի 24-ին կնքված՝ N ԱՄԴ-01/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արհեստագործական սարքավորումների ձեռքբերում՝ 37,458,580 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«04» սեպտեմբերի 2015թ.

« Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցի համար ուսուցողական սարքավորումների ձեռքբերում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ապահովել Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցը անհրաժեշտ ուսուցողական սարքավորումներով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Շուշի, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 37.458.580,00 ՀՀ դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ԼՂՀ Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան արհեստագործական մասնագիտական դպրոցը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ օգոստոսի 24-ից մինչեւ 2015թ.նոյեմբերի 24-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ օգոստոսի 24-ից մինչեւ 2015թ.նոյեմբերի 24-ը ընկած ժամանակահատվածում ներկայացված ցանկում նշված սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 37.458.580,00 դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԱՐԵԳ» ԱԿ-ից ներկայացված ցանկի համաձայն սարքավորումների ձեռքբերում, տեղափոխում և անհատույց հանձնում՝ 37.458.580,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (մոնիտորինգ եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 991 - Ա**

**քաղ. Երևան**

# «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի C3 ԽՄԲԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի N 07/80-2/25037-15 և սեպտեմբերի 7-ի N 06/3-3/24724-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 02/14/11027-15, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N ՖԲ/ԱնՄ-1-2/7873-15 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 1/6/1-2/4421-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 36,590,098 դրամ արժողությամբ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի C3 խմբասենյակների հիմնանորոգման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՍ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01256867) 2015 թվականի օգոստոսի 20-ին կնքված՝ N Հ-20-08-2015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում՝ 190,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արման-Թաման» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417115) 2015 թվականի օգոստոսի 28-ին կնքված՝ N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Օջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04417737) 2015 թվականի օգոստոսի 28-ին կնքված՝ N 15-5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 36,000,098 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
“Կամրջակ” սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Բ. Աղամալյանի կողմից

31.08.2015 թ.

# Ծրագիր
## «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի C3 խմբասենյակների հիմնանորոգման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արարատի մարզի Նոր Խարբերդ գյուղում գտնվող «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի C3 խմբասենյակների հիմնանորոգում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | “Կամրջակ” սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպություն (իրավաբանական հասցե ք. Ջ. Սարկավագի 129/5,ՀՎՀՀ՝ 01003187 հեռ՝ 516-044: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Նոր Խարբերդ գյուղ, «Խարբերդի մասնագիտացված Մանկատուն» ՊՈԱԿ: Բնագավառը՝ սոցիալական : |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում 36,590,098 (երեսուն վեց միլոնհինգ հարյուր իննսուն հազար իննսուն ութ) դրամ : |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ (ՀՎՀՀ՝ 03801255. հեռ՝ 023660025, Մասիս ԱՇԻԲ բանկ ՀՀ-247290001004) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 28.08.2015-ից մինչև 27.12.2015թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «ՕՋԱԽ» ՍՊԸ ի հետ 36,000,098(երեսուն վեց միլոն իննսուն ութ ) դրամ: Նաև կնքվել է հեղինակային հսկողության պայմանագիր «Աս նախագիծ» ՍՊԸ հետ՝ 190,000 (հարյուր իննսուն հազար) դրամի չափով և 400,000 (չորս հարուր հազար) դրամի չափովվ՝ «ԱՐՄԱՆ -ԹԱՄԱՆ» ՍՊԸ-ի հետ շինարարության տեխնիկական հսկողության համար, որոնք աշխատում են առանց ԱԱՀ-ի: Միջոցառումները կկատարվեն 28.08.2015-ից մինչև 27.12.2015թ. |
| 10. | Ձեռք բերվող,ներմուծվող,ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը ,ծավալները և նախատեսվող գինը | Շինարական աշխատանքների իրականացման համար կնքվել պայմանագիր «ՕՋԱԽ» ՍՊԸ ի հետ 36,000,098(երեսուն վեց միլոն իննսուն ութ ) դրամ: Նաև կնքվել է հեղինակային հսկողության պայմանագիր «Աս նախագիծ» ՍՊԸ հետ՝ 190,000 (հարյուր իննսուն հազար) դրամի չափով և 400,000 (չորս հարուր հազար) դրամի չափովվ՝ «ԱՐՄԱՆ -ԹԱՄԱՆ» ՍՊԸ-ի հետ շինարարության տեխնիկական հսկողության համար, որոնք աշխատում են առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակծությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականցման ընթացքում համագործակցելու ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի տնօրինության կողմից և աշխատանքների կատարումից հետո Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն: |

Տնօրեն՝ Բ. Աղամալյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 992 - Ա**

**քաղ. Երևան**

### «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՇՂԱՐՇԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱԳԾԻ ԵՎ ՋՐԱՄԲԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24936-15 և սեպտեմբերի 7-ի N 06/3-3/24723-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 02/14/11024-15 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 01/4541-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու 129/5, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող՝ 4,800,986 դրամ արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շղարշիկ համայնքի ջրագծի և ջրամբարի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեստ Պլաստ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239826) 2015 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N 18/08-15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրագծերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 1,795,696 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էդ Սյուն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0942225) 2015 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N «ՀՀ-ՍՄԿՔ-ԱՇԶԲ-2Ե» պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամբարի վերանորգման աշխատանքների իրականացում՝ 3,005,290 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի իրականացման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
“Կամրջակ” սոցիալ բարեգործական հասարակական
կազմակերպության տնօրեն Բ. Աղամալյանի կողմից
**28.08.2015թ.**

# ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շղարշիկ համայնքի ջրագծի և ջրամբարի կառուցման ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրով նախատեսվում է 374 մետր խմելու ջրագծի կառուցումով և առկա ջրամբարի նորոգմամբ ապահովել համայնքի բնակիչների ջրի օգտագործման հիմնախնդիրը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վիլդե Գանզեն ՀԿ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագրի կատարողը | “Կամրջակ”ՍԲՀԿ-ն, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան Զ.Քանաքեռցու 129/5, Աշխ. Կորյունի 3-14/1, հեռ՝ 516-044, ֆաքս՝ 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի Շղարշիկ համայնքը, բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 4.800.986 (չորս միլոն ութհարյուր հազար ինը հարյուր ութսունվեց) դրամ : |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2015 թվականի սեպտեմբերի 18.08.2015-ից մինչև 20.10.2015թվական |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | «Վեստ Պլաստ Գրուպ»ՍՊԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար 1.795.696 (մեկ միլոն յոթ հարյուր իննսուն հինգ հազար վեց հարյուր իննսուն վեց դրամ ) առանց ԱԱՀ-ի: Կնքվել է պայմանագիր “Էդ-Սյուն “ՍՊԸ-ի հետ , 3,005.290 (երեք միլոն հինգ հազար երկու հարյուր իննսուն ) դրամ արժողությամբ,որով ընկերությունը պատավորվում է կատարել հողային աշխատանքները: Միջոցառումների կիրականացվեն 18.08.2015-ից մինչև 20.10.2015թվական |
| 10. | Ձեռք բերվող, ներմուծվող, ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Վեստ Պլաստ Գրուպ»ՍՊԸ հետ կնքվել է կապալի պայմանագիր խողովակների գնման և միացման աշխատանքները կատարելու համար 1.795.696 (մեկ միլոն յոթ հարյուր իննսուն հինգ հազար վեց հարյուր իննսուն վեց դրամ ) առանց ԱԱՀ-ի: Կնքվել է պայմանագիր “Էդ-Սյուն “ՍՊԸ-ի հետ , 3,005.290 (երեք միլոն հինգ հազար երկու հարյուր իննսուն ) դրամ արժողությամբ,որով ընկերությունը պատավորվում է կատարել հողային աշխատանքները: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականցման ընթացքում համագործակցելու ենք Կապան քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է Կապանի քաղաքի քաղաքապետարանի աշխատակիցների կողմից և աշխատանքների կատարումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 993 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8 -ի N 07/80-2/24752-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24833-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Վլադիմիր Գեորգիի Ավագյանի (անձնագիր N 72 4846802, տրված՝ 07.06.2013թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված շինարարական ապրանքների (98,105 կգ ընդհանուր քաշով, 1,549,123 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար քաղաքի մանկապարտեզի շինարարության համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 994 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 24-ի N 07/80-2/1974615 և սեպտեմբերի 3-ի N 06/3-3/24353-15 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի հուլիսի 27-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6584-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ( Crocs ֆիրմայի արտադրության կոշիկներ, 33 տեղ, 3,155.4 կգ ընդհանուր քաշով, 208,346.73 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7,200 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն հանձնելու վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Երևանի քաղաքապետարան, Հայաստանի Հանրապետության Լոռու, Շիրակի, Կոտայքի և Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ձր. 11/6.2

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ."ԲԿ Հայաստանյան մասնաճյուղի անունով
"Հայկական միացյալ հիմնադրամի" կողմից ուղարկված 33պալետ 3155,4 կգ բրուտտո քաշով և 208346.73 ԱՄՆ դոլար արժողությամբ (ճանապարհածախսը 7200 ԱՄՆ դոլար) բեռի բաշխման

ՑԱՆԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ | քաշ բրուտտո կգ |
|---|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 9,257 | 208347 | 3155 |

Երեխաների աջակցության հիմնադրամ ՀԿ ք.Հրազդան

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **200** | 4501 |

"Տիրամայր Հայաստանի կուսաստան" ք.Գյումրի

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **900** | 20256.00 |

ք.Գավառ,"Բարի Հույս "հաշմանդամ երեխաներին աջակցող ՀԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **150** | 3376.00 |

ք.Չարենցավան "Ռեսուրս կենտրոն" ԲՀԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **200** | 4501 |

Երիտասարդների և կանանց կենտրոն ք.Սպիտակ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **250** | 5627 |

Ք.Գորիս 'Գործընկերություն և ուսուցում"ՀԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **250** | 5627 |

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-Կրթական կենտրոն ք.Գյումրի

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | **350** | 7877 |

ա. 11/6.2

ք.Երևան "Փրկություն" հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ԲՀԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 73 | 1643 |

Գ.Մելիքյանի Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 1,500 | 33760 |

"Ֆոքըս օն չիլդրեն նաու,ինկ." ԲԿ Հայաստանյան մասնաճյուղ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 4,364 | 98222 |

Խարբերդի հատուկ դպրոց ՊՈԱԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 300 | 6752 |

Նոյեմբերյան թիվ 1 ՆՀ ՀՈԱԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 320 | 7202 |

ք.Բերդ թիվ 2 մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ

| # | ապրանքի անվանում | քանակ զույգ | արժեք $ |
|---|---|---|---|
| 1 | Crocs կոշիկներ | 400 | 9003 |

CHARITABLE PROGRAMS COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA
02508251

Հայաստանյան մասնաճյուղ
Armenian branch
00130776
FOCUS ON CHILDREN NOW, INC. CHARITY ORGANIZATION ARMENIAN BRANCH

Ի լրումն մեր 2015 թվականի սեպտեմբերի 16-ի
N 15/15.1/15799-15 ելիցի

23 սեպտեմբերի 2015թ.

15/15.1/16216-15

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N Մ-994-Ա որոշման 1-ին կետում «3,155.4 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «3,560 կգ ընդհանուր քաշով» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 995 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24926-15 և սեպտեմբերի 8-ի N 06/3-3/24927-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N ԱՄ/22.2/10398-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Ցյուրիխի մանկական հիվանդանոց- Էլեոնորեն հիվանդանոցի պրոֆեսոր Մարկուս Վեյսի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բժշկական պարագաները (4.81 կգ ընդհանուր քաշով, 50 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 62 շվեյցարական ֆրանկ, «ՄՓ և «ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 996 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2 («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N 07/80-2/24761-15 և N 06/3-3/24925-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 8-ի N ԱՄ/22.2/10397-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի ՍԵՄՌԱ ՊԼյուս հիմնադրամի տնօրեն Ժան-Պիեռ Բեռնարի կողմից Գրոս Ապոտեկե Դր Բիկսել կազմակերպության միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված կալցիում ացետատ դեղորայքը (54 կգ ընդհանուր քաշով, 2 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 400 շվեյցարական ֆրանկ, «ՄՓ և «ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 997 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 07/80-2/23532-15 և օգոստոսի 28-ի N 06/3-3/23459-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 26-ի N ԱՄ/22.2/9880-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (բժշկական պարագաներ, 10 տեղ, 81.8 կգ ընդհանուր քաշով, 691.83 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,173.13 դանիական կրոն, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 998 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 07/80-2/23533-15 և օգոստոսի 28-ի N 06/3-3/23370-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 26-ի N ԱՄ/22.2/9881-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութերի պահպանման ջերմաստիճանային ռեժիմը գրանցող տվիչներ, 1 տեղ, 132 կգ ընդհանուր քաշով, 24,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,102.25 շվեյցարական ֆրանկ, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 999 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 07/80-2/23534-15 և օգոստոսի 28-ի N 06/3-3/23432-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 26-ի N ԱՄ/22.2/9899-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (լաբորատոր սարք (3 հավաքացու), 5 տեղ, 18 կգ ընդհանուր քաշով, 7,236 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 173.75 եվրո, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1000- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 3-ի N 07/80-2/24350-15 և սեպտեմբերի 5-ի N 06/3-3/24527-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը (133 տեղ, 4,774.94 կգ ընդհանուր քաշով, 37,626.07 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6.750 եվրո, ցանկը կցվում է, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2014 թվականի հոկտեմբերի 24-ի N Մ-1047-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

2015/05100033/30958 փոխադրման ամփոփագրով

ներմուծված ապրանքներ

| *N* | *Ապրանքի անվանում* | *Տեղ* | *Քաշ բրուտո (կգ)* | *Քաշ նետտո (կգ)* | *Արժեք (Եվրո)* | *CMR N/ Ինվոյս N* |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Փրփրային կրակմարիչ GLORIA SD6 (6 լիտր) 13 հատ | 1 | 140.5 | 126.5 | 936 | 23/15 |
| 2 | Խոտ հնձիչ մեխանիկական կցամաս AVANT մինիտրակտորի համար Lawn Mower 1500 և կոմպլեկտավորող մասեր | 5 | 350 | 350 | 4900 | 208459 |
| 3 | Ներքին ջրասնուցման համակարգի մետաղական կցորդիչ դետալներ | 1 | 90 | 81 | 1446.88 | 06-123915 |
| 4 | Հորատանցքային վերհան պոմպ Grundfos SP17-7 400V 1 հատ | | 34 | 33 | 1473.74 | |
| 5 | Պղնձյա բազմալար մալուխ 80մ | | 8 | 8 | 301.6 | |
| 6 | Մետաղական ճոպան 80մ | | 12 | 12 | 481.6 | |
| 7 | Պղնձյա միալար մալուխ 240մ 1.5մմ.քառ | 1 | 14 | 14 | 336.6 | 06-123848 |
| 8 | Պլաստիկ խողովակ 50մմ-ոց 55մ | | 21 | 21 | 144.9 | |
| 9 | Ջրամատակարարման համակարգի մետաղական կցորդիչ դետալներ (696 հատ) | | 201 | 173 | 6102.36 | |
| 10 | Սպասքի լվացման հեղուկ մաքրման միջոցներ RALA (տարբեր չափսերի 66 տարրաներ) | | 1232.85 | 1108.8 | 4934.74 | |
| 11 | Տարրաների բամբակյա պաշտպանիչ մեկուսիչներ | 2 | 0 | 0 | 602.31 | 15-16384 |
| 12 | Պլաստիկ տարրաների հավաքածու | | 8 | 8 | 401.54 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Գետնի բատուտ Eurotramp Master 1 հատ | 8 | 190 | 190 | 3198.5 | 13954771 |
| 14 | Ճոճանակի մետաղական աքսեսուարներ | 1 | 4 | 4 | 246.99 | |
| 15 | Ճոճանակի մարմին մետաղական | | 17.5 | 17.5 | 991.45 | |
| 16 | Փափուկ 19 կտորանոց խաղահրապարակ խլորոֆիբր-սինտիպոն 1 հատ | 10 | 62 | 62 | 1086.11 | |
| 17 | Սպորտային խաղագորգ պոլիեստերից 200x150x30սմ | 1 | 23 | 23 | 361.16 | |
| | Ֆրախտ ծախսեր | 0 | 0 | 0 | 450.53 | |
| 18 | Կերամիկական սալիկներ WP HOME 250x400մմ | 12 | 320.4 | 288.4 | 801 | 02-11-08-15 |
| 19 | Կերամիկական սալիկներ BP STA 305x305մմ | 11 | 226.29 | 200 | 565.73 | |
| 20 | Սալիկի սոսինձ Rofix 55 (ցեմենտավազյա հիմքով) | 5 | 150 | 140 | 123.36 | |
| 21 | Փայտյա մանկական մանեժ | 1 | 20 | 16.6 | 45.5 | |
| 22 | Բամբակյա մանկական և պատանեկան տաբատներ և բաճկոններ (օգտագործած) | 3 | 800 | 780.6 | 5390 | 01-11-08-15 |
| 23 | Այգեգործության ձեռքի գործիքների հավաքածու | 27 | 74.8 | 72.8 | 616.47 | |
| 24 | Հիվանդի խնամքի մետաղական մահճակալ (օգտագործած) | 1 | 130 | 120 | 110 | |
| 25 | Մետաղական մահճակալի կցամասեր (օգտագործած) | 2 | 80 | 75 | 73 | |
| 26 | Մետաղական մանկական անվասայլակներ (օգտագործած) | 31 | 152 | 144 | 62 | |
| 27 | Պլաստիկ աղբարկղեր | 4 | 40 | 40 | 224 | |
| 28 | Խոհանոցի մետաղական պարագաներ | 3 | 298 | 230 | 468 | |
| 29 | Մետաղական մեծ հովանոցներ | 3 | 75.6 | 23 | 750 | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 133 | 4774.94 | 4362.2 | 37626.07 | |

Հայկական Կարիտաս ԲԸԿ
/Գործադիր տնօրեն՝ Գ. Տարասյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1001-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱ-ԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (3)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 28-ի N 07/80-2/23354-15 և օգոստոսի 28-ի N 06/3-3/23464-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 26-ի N ԱՄ/22.2/9883-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բժշկական սարքերի և մահճակալների (34 տեղ, 5,404 կգ ընդհանուր քաշով, 789,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7,466 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1002- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 1-ի N 07/80-2/23784-15 և օգոստոսի 31-ի N 6/3-3/23701-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 28-ի N ԱՄ/22.2/10016-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված վիրահատական պարագաները՝ «gellugel» (1 տեղ, 5 կգ ընդհանուր քաշով, 1,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1003- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 1-ի N 07/80-2/23783-15 և օգոստոսի 31-ի N 6/-3/23702-15, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի օգոստոսի 28-ի N ԱՄ/22.2/10011-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված վիրահատական պարագաները՝ «discovisc» (1 տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 4,600 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**11 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1004-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*(«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)*

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի 2015 թվականի սեպտեմբերի 7-ի գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 15-ի «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2013-2015 թվականների ընթացքում իրականացվող N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 1005 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի սեպտեմբերի 11-ին)
**քաղ. Երևան**

### ԱՆՀԱՏ ԲԱՐԵՐԱՐ ՀԵԼԵՆ ԶՈՀՐԱԲԻ ՀԱԳՈՊՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 07/80-2/25345-15 և սեպտեմբերի 11-ի N 06/3-3/25600-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Հելեն Զոհրաբի Հագոպյանի (AA0008090, տրվ. 09.04.2015 թ., 002-ի կողմից, հասցեն՝ ՀՀ, քաղ. Երևան, Թումանյան 34, բն. 34) կողմից Հայաստանի Հանրապետություն իր անունով ստացված բեռի (125 տեղ, 3,000 կգ ընդհանուր քաշով, 3,000 կանադական դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,000 ԱՄՆ-ի դոլար (ցանկը կցվում է), «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռն անհատույց հանձնվելու է «Հայ Օգնության Միություն» բարեգործական հասարակական կազմակերպությունը:

2. «Հայ Օգնության Միություն» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ընդունումը և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### Բեռների ցանկ

| հ/հ | անվանում | քանակ |
|---|---|---|
| 1 | Սառնարան | 1 հատ |
| 2 | Լվացքի մեքենա | 1 հատ |
| 3 | Հագուստի պահարան | 1 հատ |
| 4 | Ննջարանի պահարան և լուսամփոփ | 2 հատ |
| 5 | Գրքի պահարաններ | 3 հատ |
| 6 | Բազկաթոռ | 1 հատ |
| 7 | Ջահ | 1 հատ |
| 8 | Ճաշասենյակի կահույք | 4 կտոր |
| 9 | Գիրք | 19 արկղ |
| 10 | Հագուստ | 6 տուփ |
| 11 | Հայելի | 3 հատ |
| 12 | Ձեռքի աշխատանք շրջանակի մեջ | 8 հատ |
| 13 | Զարդեր ոչ թանկարժեք/բիժուտերիա/ | 20 կտոր |
| 14 | Գորգ | 1 հատ |
| 15 | Սեղանի լուսամփոփներ | 4 հատ |
| 16 | Խոհանոցի պարագաներ | 10 արկղ |
| 17 | Գինու տուփ և գարեջրի բաժակներ | 1 տուփ, 10 բաժակ |
| 18 | Ճոճվող բազկաթոռ | 1 հատ |
| 19 | Բրոնզե արձան | 1 հատ |
| 20 | Ճաշասենյակի փոքր սեղան | 1 հատ |
| 21 | Արձանի տակդիր սեղան | 1 հատ |
| 22 | Ծաղկաման | 2 հատ |
| 23 | Հեռուստացույց | 1 հատ |
| 24 | Հեռուստացույցի տակդիր սեղան | 1 հատ |
| 25 | Անձեռոցիկ | 1 հատ |
| 26 | Աման լվանալու հեղուկ | 1 հատ |
| 27 | Գործիքների տուփ | 1 տուփ, 25 գործիք |
| 28 | Հագուստի կախիչ | 1 հատ |
| 29 | Ճաշասենյակի պահարաններ /բացվող դռներով/ | 1 կտոր |
| 30 | Հարիչ | 1 հատ |
| 31 | Դանակների հավաքածու | 6 հատ դանակ |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**16 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 1006 – Ա**

(Որոշումն ընդունվել է 2015 թվականի սեպտեմբերի 11-ին)

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայաստանի մանուկների հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 11-ի N 07/80-2/25513-15 և սեպտեմբերի 9-ի N 06/3-3/25155-15 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա (2015 թվականի օգոստոսի 28-ի Մ-874-Ա, և Մ-882-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «3,000,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «22,742,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2015 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված՝ N 075 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է TOYOTA մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 22,226,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է
Հայաստանի մանուկներ բարեգործական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի կողմից
Սեպտեմբեր 2015թ.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Զարգացնել գյուղական, այդ թվում սահմանամերձ համայնքները: Հիմնել տարատեսակ խմբակներ համայնքների երեխաների համար, օժանդակել գյուղական համայնքներում կրթության որակի բարձրացմանը՝ վերապատրաստելով ուսուցիչներին, ուսանել և նպաստել առողջ ապրելակերպի վարմանը, իրականացնել երեխայի և ընտանիքի աջակցության տարաբնույթ ծրագրեր, ներառյալ հոգեբանական աջակցության և հատուկ մանկավարժական այլ օժանդակության միջոցով, խթանել շահառու համայնքների տնտեսական զարգացումը՝ ձեռնարկատիրական գործունեության բարելավման, բիզնես ծրագրերի նախագծման և համայնքային զարգացման ծրագրերի իրագործման միջոցով: «Սմարթ» ծրագիրը ստեղծում է հնարավորություն երիտասարդների և համայնքների բնակիչների համար զարգացնել գիտելիքները նոր տեխնոլոգիաների օգտագործման բնագավառում և շրջակա միջավայրը ուսումնասիրող գիտություններում: Այն մի հարթակ է որտեղ շահառուները կատարելագործում են իրենց գիտելիքները արհեստների, արվեստների, լեզուների և նորագույն տեխնոլոգիաների բնագավառներում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագիրը բարեգործական որակելուց հետո հիմնադրամի կողմից կնքված հարակից գործարքները և ներմուծվող բեռները կստանան հնարավորություն ազատվելու ԱԱՀ-ից, օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից ինչը և կօգնի հիմնադրամին ավելի շատ ներդրումներ կատարել համայնքներում: Ներմուծվող բեռները կստանան օրենքով սահմանված հարկային և մաքսային արտոնություններ: |
| 3 | Բարեգործը | "Children of Armenia Fund" New York, USA. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. |
| 4 | Ծրագիր կատարողը | Հայաստանի մանուկներ հիմնադրամ, ՀՎՀՀ02569972, ՀՀ ք.Երևան 0001, Հյուսիսային պող 1, 8-րդ հարկ, 24 սենյակ |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը - բնագավառը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Բնագավառը՝ բարեգործական ծրագրեր համայնքների բնակիչներին, այդ թվում նյութեր, պարագաներ, սարքավորումներ և այլ բեռներ ներմուծելու միջոցով: Կրթական, առողջապահական, սոցիալական, տնտեսական և գյուղատնտեսական ծրագրերի իրականացում: Շինարարական նյութերի ձեռքբերում և շինարարություն: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 22.742.000 /քսաներկու միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար/ ԱՄՆ դոլար: |
| 7 | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արմավիր, Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Վայոց Ձոր, Արարատ, Կոտայք մարզերը: Ստորև նշված են նախապես ընտրված համայնքները. |



| | | |
|---|---|---|
| | | Արմավիրի մարզ. Քարակերտ, Մյասնիկյան, Լեռնագոգ, Դալարիկ, Շենիկ, Հացիկ, Վանանդ, Գետաշեն, Սարդարապատ, Արգինա, Երվանդաշատ, Բագարան, Արմավիր, Տալվորիկ, Արևադաշտ, Արտամետ, Կողբավան, Բաղրամյան համայնքները: |
| | | Արագածոտնի մարզ. Արտենի, Արագածավան, Թլիկ, Գետափ (Թալինի տարածաշրջանի համայնքներ) |
| | | Լոռու մարզ. Թումանյան, Քարինջ, Մարց, Դսեղ, Դեբետ, Վահագնի, Վահագնաձոր, Ձորագյուղ, Թումանյանի տարածաշրջանի, Ստեփանավանի տարածաշրջանի, Գուգարքի տարածաշրջանի համայնքներ |
| | | Տավուշի մարզ. Նոյեմբերյանի համայնքներ |
| | | Գեղարքունիքի մարզ. Մարտունի, Ճամբարակի տարածաշրջանի համայնքներ |
| | | Սյունիքի մարզ. Գորիս |
| | | Վայոց Ձորի մարզ. Եղեգնաձոր |
| | | Շիրակի մարզ. Արթիկի տարածաշրջանի, Մարալիկի տարածաշրջանի, Ախուրյանի տարածաշրջանի, Ամասիայի տարածաշրջանի համայնքներ: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01/01/2015թ. - 31/12/2018թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տնտեսական և գյուղատնտեսական 750.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Փոքր բիզնեսների ֆինանսական աջակցություն: Ագրոդպրոց, որտեղ երեխաները ծանոթանում և փորձարկում են ավանդական ու ժամանակակից գյուղատնտեսության տեխնիկական հնարավորությունները: Դասընթացներ ֆինանսական միջոցների կառավարման վերաբերյալ և այլն:*<br>*ՓՄՁ մասնագիտական աջակցություն*<br>*Գործազուրկ կանանց զբաղվածության ապահովում*<br>*Երիտասարդների շրջանում ձեռներեցության խրախուսում և գյուղատնտեսական գիտելիքների բարձրացում*<br>*Գյուղմթերքների սպառման աջակցություն: Հիմնականում E-Agro համակարգի ներդնում և ուսուցանում: Այն կօգնի գյուղատնտեսին գտնել համագործակցության եզրեր հայ գործարարների հետ:* |
| | | Առողջապահական - 1.440.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Գյուղական բուժհաստատությունների վերանորոգում և վերազինում*<br>*Դպրոցներում առողջության խրախուսում*<br>*Դպրոցական ճաշարանների հիմնում և սննդի անվճար մատակարարում: Սննդակարգի կազմում մասնագետների խորհրդով: Ճաշարաններում սանիտարական զննումներ և կարգավորումներ և այլն:*<br>*Բերանի խոռոչի հիգիենայի խրախուսում և անվճար ատամնաբուժական ծառայություններ երեխաներին*<br>*ԱԱՊ օղակի բուժաշխատողների վերապատրաստում* |

| | | |
|---|---|---|
| | | *Բնակչության առողջապահական կրթում*<br>*Բնակչության զանգվածային զննումներ* |
| | | Կրթական - 1.380.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Դպրոցների հիմնանորոգում և կահավորում*<br>*Դպրոցական ադմինիստրատորների և ուսուցիչների վերապատրաստում*<br>*Արտադասարանային խմբակներ*<br>*Ամառային ճամբարներ*<br>*Աշակերտական խորհուրդների հիմնում և աջակցություն*<br>*Անգլերենի խորացված ուսուցում* |
| | | Սոցիալ-հոգեբանական - 1.080.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Սոցիալական աջակցություն/խորհրդատվություն*<br>*Հոգեբանական ծառայություն*<br>*Դպրոցական հոգեբանների վերապատրաստում*<br>*Լոգոպեդական/հատուկ մանկավարժական ծառայություն*<br>*Ուսման դժվարություններ ունեցող երեխաների աջակցություն*<br>*Մանկան զարգացման կենտրոնների հիմնում և աջակցություն* |
| | | Ենթակառուցվածքներ - 2.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Ամբուլատորիաների վերանորոգում* |
| | | *Սպորտային դահլիճների վերանորոգում* |
| | | *Դասարանների վերանորոգում* |
| | | *Խաղահրապարակների վերանորոգում* |
| | | *Մանկապարտեզների վերանորոգում* |
| | | *Ճաշարանների վերանորոգում* |
| | | Սմարթ Ծրագիր. Սմարթ կամպուսներ ներառյալ Սմարթ Կենտրոններ, բուժօգնության և բուժկրթության կլինիկաներ, երեխայի խնամքի կենտրոններ, սպորտային խաղահրապարակներ, գյուղատնտեսական համալիրներ, հյուրատներ, ինչպես նաև Սմարթ գրասենյակներ շահառու գյուղերում 15.000.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: |
| | | *Արծաթագործություն*<br>*Փայտագործություն և կահույքագործություն* |



| | | |
|---|---|---|
| | | *Գորգագործություն և կարպետագործություն*<br>*Կար ու ձև*<br>*Ծինարարություն (սվաղ, զոդում, սալիկապատում)*<br>*Կավագործություն*<br>*Մեքենայի վերանորոգման աշխատանքներ*<br>*Վարսավիրություն*<br>*Ծղոտագործություն*<br>*Օտար լեզուների դասավանդում*<br>*Երաժշտական ուսուցում*<br>*Պարի ուսուցում*<br>*Նկարչություն*<br>*Մեդիա գրագիտություն*<br>*Ծրագրավորման հիմունքներ և ռոբոտաշինություն* |
| | | Կազմակերպչական - 1.092.000 ԱՄՆ դոլար ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի համար: Մանրամասն ներկայացված է ծրագրի 11 -րդ կետում: |
| 10 | Ձեռք բերվելիք /ներմուծվող/ ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել սննդամթերք, գրասենյակային պիտույքներ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, սանտեխնիկա, շինանյութ, շին. տեխնիկա, գյուղ.տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, շապիկներ, սպորտային համազգեստ, հագուստ և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարեգործական բեռների ներմուծում, մասնավորապես հագուստ, համակարգչային տեխնիկա, կահույք, բուժ. պարագաներ և սարքավորումներ, գրքեր, գրենական պիտույքներ, շինարարական նյութեր՝ ցեմենտ, ապակի և այլն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կնքել պայմանագրեր կապալառուների հետ՝ նախագծային, շինարարական, հսկողական աշխատանքների կատարման համար, առողջապահական, հետազոտական, սոցիալական ծրագրերի իրականացման համար, փորձագետների մասնագիտական վերահսկողական, ուսուցողական ծառայությունների համար: Ծրագրերը ավելի մանրամասն ներկայացված են ծրագրի 9-րդ կետում: |
| 11 | Կազմակերպչական ծախսեր | Կազմակերպչական ծախսերը 01/01/2015թ.-31/12/2018թ. Ժամանակահատվածի համար կազմում են - 1,092,000 ԱՄՆ դոլար<br><br>- Տարածքի վարձակալություն գրասենյակի համար 130,000 ԱՄՆ դոլար<br>- Տրանսպորտային միջոցների ձեռք բերում - 162,000 ԱՄՆ դոլար<br>- Աշխատավարձ 417,000 ԱՄՆ դոլար<br>- Վառելիք մեքենաների համար 130,000 ԱՄՆ դոլար<br>- Գործուղումներ 30,000 ԱՄՆ դոլար<br>- Կոմունալ վճարումներ 70,000 ԱՄՆ դոլար |

| | | |
|---|---|---|
| | | - Գրասենյակային պարագաների ծախք բերում - 18,000 ԱՄՆ դոլար<br>- Միջոցառումների կազմակերպման համար ադմինիստրատիվ ծախսեր 135,000 ԱՄՆ դոլար |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցել ՀՀ նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, բանկերի և միջազգային կազմակերպությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund հիմնադրամի, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների և անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: |

Անուշ Եդիգարյան

Գործադիր տնօրեն

Հայաստանի մանուկներ հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 1007 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Բարեկեցություն» բարեգործական հիմադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 16-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված չորս խմբաքանակ օդափոխության համակարգերի հովացման և սառեցման համակարգերի սարքավորումները ու մասերը ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) 14 տեղ, 2,109 կգ ընդհանուր քաշով, 10,684.61 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,048,800 դրամ, մաքսային ձևակերպումները կատարվելու են «ՄԾՓ» ՏՄ.

2) երկու տեղ, 2,884.8 կգ ընդհանուր քաշով, 15,411.4 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,103,120 դրամ, մաքսային ձևակերպումները կատարվելու են «ՄԾՓ» ՏՄ.

3) 144 տեղ, 4,475.764 կգ ընդհանուր քաշով, 49,099 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,114,465 դրամ, մաքսային ձևակերպումները կատարվելու են «Արարատյան» ՏՄ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 1008 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առողջ կյանքի ուղի»)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը, ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված և ներմուծված բեռը (35 տեղ, 3,080 կգ ընդհանուր քաշով, 9,580 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, իսկ փոխադրման ծախսերը կազմում են 1,400 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա և 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1009-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2015 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից ձեռք բերված «Opel Zafira-A» մակնիշի ավտոմեքենան (2003 թվականի արտադրության, 3,400 ԱՄՆ-ի դոլար արժողության, նույնականացման համարը՝ W0L0TGF7532144846, «ԱՄ ՄՁՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա որոշմամբ հաստատված (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա և 2014 թվականի հուլիսի 9-ի N Մ-654-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1010-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-1041-Ա որոշման մեջ (2015 թվականի մարտի 13-ի N Մ-222-Ա և սեպտեմբերի 10-ի N Մ-960-Ա որոշումների խմբագրությամբ) ու կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին ու կից ծրագրի 6-րդ կետերում «76,893,500 դրամ» բառերը փոխարինել «80,893,500 դրամ» բառերով.

2) ծրագրի 9-րդ կետում «71,012,000 դրամ» բառերը փոխարինել «75,012,000 դրամ» բառերով.

3) ծրագրի 10-րդ կետի երրորդ ենթակետում «54,574,000 դրամ» բառերը (2015 թվականի սեպտեմբերի 10-ի N Մ-960-Ա որոշման խմբագրությամբ) փոխարինել «58,574,000 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված պրոյեկտորը, դյուրակիր համակարգիչները, ֆոտո-



խցիկները և ֆոտոխցիկի օբյեկտիվները (մեկ տեղ, 28 կգ ընդհանուր քաշով, 6,790.65 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 405 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 սեպտեմբերի 2015 թվականի N Մ- 1011 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Բարեկեցություն» բարեգործական հիմադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սառցաստացման համակարգերի սարքավորումները և ապրանքները ( 11,000 կգ ընդհանուր քաշով, 5,558,300 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ և 23,135 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,369,959 դրամ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 26-ի «Բարեկեցություն» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարզաառողջարարական համալիրի կառուցում» ծրագրի մասին (3-րդ փուլ)» N Մ-648-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-744-Ա, օգոստոսի 28-ի N Մ-880-Ա և N Մ-888-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 1012 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-928-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 18-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից ձեռք բերված կաթի սառեցման սարքավորումները (8 տեղ 1,900 կգ ընդհանուր քաշով, 33,468 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ փոխադրման ծախսերը կազմել են 4,500 եվրո, «ՄԾՓ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 14-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզում գյուղացիական բնակչության կենսամակարդակի բարձրացման և պարենի անբավարարվածության կրճատման» ծրագրի մասին» N Մ-928-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1021-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 սեպտեմբեր 2015 թվականի N Մ - 1013 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2015 թվականի սեպտեմբերի 11-ին)
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ-ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԻՏՈՒՄԻ ՆԵՐԿՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 16-ի N 07/80-2/26049-15 և սեպտեմբերի 22-ի N 06/3-3/26912-15, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2015 թվականի սեպտեմբերի 16-ի N 02/14/11206-15 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 87,500,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«SEVAN» CENTRAL TRADING CO Իրանական ընկերությունան հետ 2015 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված N B-02/15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է միջնորդական ծառայությունների մատուցում՝ 1,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«10» սեպտեմբերի 2015թ.

## «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող ռազմավարական նշանակության ավտոճապարհի կառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ բիտումի ներկրում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 87.500.000,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2015թ սեպտեմբերի 10-ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 10-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2015թ սեպտեմբերի 10-ից մինչեւ 2015թ. դեկտեմբերի 10-ը 500 տոննա 85/100 տեսակի բիտումի ներկրում՝<br><br>86.250.000,00 ՀՀ դրամ արժեքով (մեկ տոննայի արժեքն է՝ 172.500,00 դրամ),<br><br>Հանձնակատարի միջնորդավճար՝ 1.250.000,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | Իրանական նավթի Ազգային Ընկերությունից «SEVAN» CENTRAL TRADING CO կազմակերպության միջոցով Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար 500 տոննա բիտումի ներկրում՝ 86.250.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի (մեկ տոննայի արժեքը՝ 172.500,00 դրամ):<br><br>Հանձնակատարի միջնորդավճար՝ 1.250.000,00 ՀՀ դրամ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և տարեկան հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 սեպտեմբերի 2015 թվականի N Մ-1014-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2015 թվականի օգոստոսի 28-ին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2/1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 07/80-2/17255-15 և հուլիսի 7-ի N 06/18-4/17660-15 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2015 թվականի հուլիսի 1-ի N ԱՄ/22.2/7540-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի, բժշկական նշանակության և այլ ապրանքների (1101 տեղ, 4,407 կգ ընդհանուր քաշով, 301,700.84 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և ստորև նշված կազմակերպություններին անհատույց բաշխման ծրագիրը՝

- «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ.
- «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն.
- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ.
- Հայաստանի ամերիկյան համալսարան.
- Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ.
- «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ.
- Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչություն.
- «Հայ օգնության միություն» բարեգործական հասարակական կազմակերպություն.



- Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն.
- «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպություն.
- «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2015 թվականի N Մ - 1015 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2015 թվականի սեպտեմբերի 24-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ամերիկայի ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից ուղարկված դեղորայքի (10 տեղ, 222.5 կգ ընդհանուր քաշով, 14,783.08 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 300 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը հանձնվելու է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ